ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԽՈՐՀՐԴԻ ՆԻՍՏԻ

29.06.2017թ.

ք. Արտաշատ

Մարզխորհրդի նիստին մասնակցում էին մարզխորհրդի 95 անդամներից 92-ը, ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարության տարածքային կառավարման վարչության պետ Ա. Սողոմոնյանը, հանրապետական գործադիր մարմինների տարածքային ծառայությունների և մարզային ենթակայության հիմնարկ-ձեռնարկությունների ղեկավարներ, ՋՕԸ-ի տնօրեններ, մարզպետարանի աշխատողներ, լրատվամիջոցների ներկայացուցիչներ:

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

1. Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին:
/ Զեկ. գյուղ.և բնապահպանության վ/պ Հ.Տերտերյան/

2. Մարզի համայնքների 2017թ. հինգ ամիսների բյուջեների կատարման մասին:
/ Զեկ. ֆին. և սոցիալ-տնտեսական զարգ. վ/պ Գ. Եղիազարյան/

3. 2017թ. 1-ին եռամսյակում մարզի համայնքներում մարզպետարանի կողմից իրականացված հսկողության արդյունքների մասին:
/ Զեկ. ՏԻ և ՀԳՄ հարցերով վ/պ Ա. Լալայան/

1.Լսեցին՝

Գյուղատնտեսական աշխատանքների ընթացքի մասին աշխատակազմի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ Հ. Տերտերյանի զեկուցումը :

/ կցվում է/

2.Լսեցին՝

Մարզի համայնքների 2017թ. հինգ ամիսների բյուջեների կատարման մասին աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Գ. Եղիազարյանի զեկուցումը:

/կցվում է/

Արտահայտվեց՝ մարզպետ Ա. Գրիգորյանը :

Առաջարկվեց

համայնքների ղեկավարներին '

- ամենօրյա ուշադրության կենտրոնում պահել ըստ հարկատեսակների գումարների հավաքագրման գործընթացը,
- գույքահարկի գծով խոշոր պարտքեր ունեցող անձանց ցուցակը ներկայացնել մարզպետարան:

3.Լսեցին՝

2017թ. 1-ին եռամսյակում մարզի համայնքներում մարզպետարանի կողմից իրականացված հսկողության արդյունքների մասին աշխատակազմի ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ Ա. Լալայանի զեկուցումը:

/կցվում է/

Մարզխորհրդի նիստն ամփոփեց մարզպետ Ա. Գրիգորյանը՝ համայնքների ղեկավարներին առաջարկելով աջակցել գյուղացիներին՝ գյուղմթերքների բերքահավաքի և մթերման գործընթացում, հատկապես՝ մթերող կազմակերպությունների և անհատների միջև պայմանագրերի կնքման հարցում:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ